

“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1903

ԹԻԻ 12




ՊԻՍՏԻՅԻ ԾՈՑԻՆ ՄԷՋ

Շատեր ծովային հաճելի ճամբորդութիւն կը վայելեն որչափ ատեն որ օգը հանդարտ է և ջուրը հարթ՝ ապակիի նման: Եւ երբեմն, մանաւանդ այն խոշոր շոգենաւերով որոնք հիմա կը գործածուին Ատլանտեանի վրայ նաւարկելու համար, մարդ կրնայ Ովկիանոսին մէկ եզերքէն միւս եզերքն

անցնիլ և չտեսնել մինչև անգամ մէկ ճամբորդ որ անհանգիստ ըլլայ բոլոր ճամբորդութեան միջոցին: Մենք անցանք Ատլանտեան Ովկիանոսը անոր այսպէս հանդարտ և խաղաղ եղած ատենը: Բայց անցանք նաև կատաղի փոթորիկներու ժամանակ, երբ շրջանակներ կը դրուէին սեղանին վրայ, որպէս զի պնակները չսահէին, և ճամբորդներէն շատը իրենց անկողինն

րուն մէջ կը մնային, և չէին թողարուեր տախտակամածին վրայ երթալ, և նաւապետը ու տախտակամածին վրայ գտնուած ուրիշներ կայմերուն կը կապուէին, որ չըլլայ թէ ակեք մը գար և ծովը աւելը զանոնք: Կան ծովեր ալ որոնք գրեթէ միշտ վրդովումի մէջ են, մինչև անգամ երբ փոթորիկ չկայ: Ասոնց մէկն է Պիստիյի Ծոցը, Գաղղիոյ արևմտեան եզերքը: Երբ տասներեք տարի առաջ անցանք անկէ, այնքան գէշ չէր որքան կ'ըլլայ շատ անգամ, և սակայն բաւական արեւոծեալ էր, այս պատկերին մէջ երևցածին մօտ: Շոգենաւը մէկ կողմէն միւսը կը գլորի, և տախտակամածին վրայ գտնուողները բան մը բռնելու են որպէս զի չսահին, վասն զի տախտակամածը կը ծռի տանիքի պէս: Եւ հոս, պատկերին մէջ, կը տեսնէք որ խեղճ մարդ մը ծովէն բռնուած է, և շոգենաւին մէկ կողմը գացած է իր ճաշը ձուկերուն թափելու համար: Ծովէն բռնուելէ աւելի տանջող բան չկայ. և եթէ բռնուիք անկէ, անոր բոլոր տևողութեան միջոցին կը փափաքիք որ տան մէջ մնացած ըլլայիք:



ՊԱՐՏԲԸ ՎՃԱՐՅԸ

Ամերիկեան թերթ մը կ'ընէ զուարճալի պատմութիւն մը զոր կ'արժէ կրկնել: Մօտերս պատահած փոթորիկը մը ատեն լրագիր ծախող ութ ինը տարեկան տղու մը ձեռքի թերթերը սաստիկ հովը թուցուց ցրուեց տիպին մէջ, ինք ալ ինկաւ գետին: Երբ ոտք ելաւ, ըսաւ կտրուկ և մտախոհ կերպով, «Սնանկացայ»: Արուեստագէտ մը, որ տեսած էր ամբողջ այս տեսարանը, չկրցաւ իր ծիծաղը բռնել. և տղան անոր ծիծաղիլը լսելով բնականապէս ուզեց հասկնալ թէ ինչ

կրնայ կենալ մէկուն դժբաղդութեան մէջ որ ինդալ կու տայ ուրիշի մը: Մարդը ըսաւ թէ իրեն վրայ չէր խընդար, և աւելցուց, «Ահա քեզի կէս տողար, նորէն գործիդ սկսելու համար:» Ասիկա փոխեց բանը, կակուղցուց տղուն զգացումները այն աստիճան որ երբ սկսաւ վազել դէպ ի հրապարակը, ըսաւ, «Վերջապէս գէշ մէկը չէք եղեր:» Արուեստագէտը իր ճամբան գնաց. բայց շուտով ոտքով վազելու ձայն մը լսեց իր ետևի կողմէն: Լրագիր ծախող տղան էր: «Բռէք, պարոն, դուք ամէն իրիկուն ասկէ՛ կ'անցնիք:» ըսաւ: «Ոչ,» պատասխանեց մարդը և աւելցուց, «Ինչո՞ւ հարցուցիր:» «Ինչու որ» ըսաւ տղան, «կ'ուզեմ ձեզի թերթ մը տալ ամէն իրիկուն, մինչև որ պարտքս վճարուի:»

Այս միջադէպին մէջ երկու բան կայ որ հիանալի են: Առաջին, տղան այդ կէս տողարը պարզ և չնկատեց, այլ փոխառութիւն: Զուգեց մտրացկան ըլլալ, և ուզեց իր անձնական արժանապատուութիւնը պահել: Երկրորդ, տղան փափաքեցաւ վճարելու սկսիլ անմիջապէս և այնպիսի մեթոտով զոր ամէնէն աւելի դիւրաւ կըրնար գործադրել: Անիկա ոչ միայն պատուոյ՝ այլ գործի ալ շագացում ունէր: Կան մարդիկ որոնք չեն վճարեր իրենց պարտքերը մինչև որ չստիպուին: Կան այնպիսիներ ալ զոր չեն ուզեր վճարել փոքր մասերով, այլ կ'ուզեն սպասել մինչև որ ամբողջարող ըլլան վճարել, և որովհետև ամբողջ դումար չանցնիր իրենց ձեռքը, երբեք չեն վճարեր: Աւելի աղէկ է վերոյիշեալ լրագրագրական տղուն օրինակին հետեւի, և ամէն օր մաս մաս տալ որչափ որ կարելի է, մինչև որ ամբողջ պարտքը վճարուի:

ԶԱՏԻԿ ԵՒ ԵՆՈՐՔԻ ՄԷՋ

Նիւ Եորքի ամէնէն ազնուական դասակարգին փողոցը առաջ քիֆթի Սուրբիւն էր: Անկէ անցնող մը կը տեսնէ երկու կողմը գեղեցիկ բնակարաններ, և գիտէ թէ այդ պերճ տուներուն մէջ կը բնակին այն մեծ քաղաքին հարստութեան մեծ մասը ունեցողները: Պրոտուէյէ քիֆթի Ալբրիւ անցնելու ատեն մարդուս տեսած փոփոխութիւնը մեծ է, վասն զի առաջինին մէջ կան առևտրական վաճառանոցները, իրենց բազմաթիւ խանութներով որոնց մէջ լեցուն են ամէն տեսակ ապրանքներ, մինչ միւսը բաղդատապէս հանդարտ է և ազատ

առաջինին մէջ տեսնուած բզզացող բազմութիւններէն: Որովհետև քաղաքը մեծցած է, հարուստ բնակիչներէն շատը քաղաքին հեռուոր մասը և կամ արուարձանները գացած են բնակելու համար, բայց և այնպէս քիֆթի Ալբրիւն բոլորովին կորսնցուցած չէ իր առաջին յատկութիւնը: Այս պատկերը կը ներկայացնէ այդ պողոտային տեսարանը մինչ ժողովուրդը եկեղեցիէն տուն կը դառնայ Զատիի առաւոտուն: Կը տեսնէք թէ ինչ բազմութիւններ կան փողոցի կողմնական ճամբաներուն վրայ. վասն զի ոտքով ճամբորդողները չեն քայլեր մէջտեղէն, ասիկա յատկացած ըլլալով կառքերու և հեծանիւններու: Երանի՛ թէ ասոր պէս բազմութիւն ըլլային ամէն կիրակի օրեր եկեղեցի գացողները

զի կենդանին, բայց ջանք ըրած միջոցին կորսնցուց հաւասարակշռութիւնը և գէշ կերպով գետնին ինկաւ ձիէն: Սոսկուսի աղաղակ մը ելաւ հանդիսատեսներուն շրթունքներէն, վասն զի տեսան որ խեղճ տղեկը մեծ վտանգի մէջ կը գտնուէր: Անշուշտ բան մը չէր կրնար ազատել զանիկա սոսկայի վտանգէն: Բայց օգնութիւնը մօտ էր: Օրիորդ մը կ'անցնէր անկէ. և խոռովեալ բազմութեան աղաղակները անոր ուշադրութիւնը գրաւեցին: Վայրկեանի մէջ հասկցաւ տղան մօտալուտ վտանգը: Անմիջապէս բռնեց հովիւին ձիւն, և վրան նետուելով ցուլին վրայ վազեց: Շուտով անոր քով հասաւ, և իր ուսէն շալը առնելով զանիկա ցուլին գլխուն և պարանոցին վրայ ձգեց, մինչ ցուլը



թէ՛ Նիւ Եորքի և թէ՛ բոլոր ուրիշ քրիստոնեայ քաղաքներուն մէջ:

ԳԻՒՅԱԶՆԱԿԱՆ ԳՈՐԾ ՄԸ

Մեծ խումբ մը մարդիկ հաւաքուած էին Քալիֆորնիոյ Սան Տիէկօ քաղաքին մէջ և իրենց բոլոր ձայներով կ'աղաղակէին շատ յուզուած: Այս աղաղակներուն և բազմութեան պատճառը շուտով հասկցուեցաւ: Խօսած հովիւ մը վայրի արջառնելու երամակ մը կը քշէր քաղաքին մէջէն: Ամէն մարդ գիտէ թէ ինչպէս վտանգաւոր կենդանիներ են անոնք, մանաւանդ եթէ խթուին գիւնեմուհի: Ինչ որ Յուլերուն ամէնէն մեծերէն մէկը որ սոսկայի եղջիւրներ ունէր, զատուեցաւ միւսներէն: Հիմա պղտիկ տղայ մը կը խաղար փողոցին մէջ խաղայիկ կառք մը քաշելով իր ետևէն, և կատաղի ցուլը վազեց տղուն ետևէն: Հովիւը ջանաց դարձնել կատա

արագ կը վազէր և տղուն մօտեցած էր: Ասիկա պատմելու չափ ժամանակ չանցած ձիէն վար ծռեցաւ, յափշտակեց տղան, դրաւ ձիուն համետին վրայ և զանիկա վտանգէն դուրս հանեց: Յընժացող հանդիսատեսներուն աղաղակները և կեցցէները ականջ կը խուլցնէին երբ այս օրիորդը ձիէն վար իջաւ և տղան դրաւ անոր երախտագէտ մօր բազուկներուն մէջ: Այս շքեղ գործը ոչ միայն մեծ պաղարհնութիւն կը ցուցնէ, այլ՝ ձի հեծնելու մեծ ճարտարութիւն մըն էր, զոր շատեր, մինչև անգամ եթէ ուզէին իսկ, անկարող պիտի ըլլային ընել: Տարակոյս չկայ թէ եթէ այս օրիորդին դիւցաղնական գործը չըլլար, տղան կ'ոխկըտուելով և ջախջախուելով պիտի մեռնէր: Այնպիսի գործ մը պիտի մնայ բոլոր անոնց յիշողութեան մէջ որոնք անոր հանդիսատես ըլլալու բարեբաղդութիւնն ունեցան:

ՉՈՐՐՈՒԿ ՊԱՏՈՒԻՐԱՆՔԻՆ

ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրեթէ դար մը առաջ տղայ մը գնաց Նիւ Եորք քաղաքը, գործ մը գտնելու համար: Իր քաղաքին մէջ տպագրութիւն սորված էր, և այդ արհեստը եղաւ անոր միակ օգնութիւնը համար և ստակ չահելու, բաց ի կատարեալ կրթութենէ մը զոր առած էր պարզ ֆրիստոնեայ տան մը մէջ: Գործ գտաւ Նիւ Եորքի ամէնէն մեծ պաշտօնատուններէն մէկուն մէջ: Շարժ օր մը իրիկուան դէմ իրեն յանձնարարուեցաւ երկար գրութիւն մը շարել զոր չէր կրնար լինցնել առանց Կիրակի օրն ալ աշխատելու: Ակնարկ մը նետեց անոր վրայ, և յետոյ ըսաւ, «Ես պիտի աշխատիմ ասոր վրայ մինչև կէս գիշեր, և պիտի ընեմ ինչ որ կարող եմ, բայց չեմ կրնար վաղը գործել»: «Ուրեմն պիտի կորսնցնես պաշտօնդ», ըսաւ տպարանին վերակացուն: Տղան գրութիւնը իր գործատէրին վերադարձնելով ըսաւ անոր թէ ինք սորված էր Կիրակին յարգել, և թէ աւելի կ'ուզէր իր գործէն հրաժարիլ, քան խղճին դէմ գործել: Գործատէրը այսպիսի հոգի մը չէր կրնար չյարգել, և այնուհետեւ երբեք նորէն չպահանջեց անկէ գործել Կիրակի օրը: Այդ տղան էր Ճան Հարփըր, Հարփըր Եղբարց հրատարակիչ տան գլխաւոր հիմնարկուն: Այս տունը Ամերիկայի լաւագոյն մատենագրութիւններէն շատեր հրատարակած է, և ունեցած է ազգեցութիւն մը որ զգացուած է համայն աշխարհ:



Նուհետեւ երբեք նորէն չպահանջեց անկէ գործել Կիրակի օրը: Այդ տղան էր Ճան Հարփըր, Հարփըր Եղբարց հրատարակիչ տան գլխաւոր հիմնարկուն: Այս տունը Ամերիկայի լաւագոյն մատենագրութիւններէն շատեր հրատարակած է, և ունեցած է ազգեցութիւն մը որ զգացուած է համայն աշխարհ:

ԱՐԵՒԻՆ ԲՈՒՈՐԱԿԱՆ ԽԱՒԱՐՈՒՄԸ

Այս պատկերներուն պատկեր կը ցուցնէ արեւին երևոյթը երբ անոր բոլորական խաւարումը 1900 Մայիս 21ին պատահեցաւ: Պատկերը քաշուեցաւ Ալթէրիոյ մէջ ուր գացին խումբ մը աստեղագէտներ, վասն զի խաւարում մը մասնական պիտի ըլլար Եւրոպա: Մեծ պատկերը քաշուեցաւ Մաւրիչըս կղզիին մէջ, որ է Մատակասկարի արեւելեան կողմը, ուր բոլորական խաւարում մը տեսնուեցաւ 1901 Մայիս 18ին: Ասիկա կը ցուցնէ արեւին մէկ կողմը միայն: Բայց երկուքին մէջ ալ կը տեսնենք թէ մինչ նոյն իսկ արեւը


մութ գունդի մը պէս է, անոր բոլորտիքը լուսաւորութիւն մը կայ որ կը կոչուի Պասկ: Կարծեմ, մեր փոքրիկ ընթերցողները գիտեն թէ արեւը կը խաւարի երբ լուսինը կու գայ մեր և արեւին մէջտեղ, և եթէ լուսինը բաւական մօտ գտնուի երկրիս, և դայ մեր և արեւին ճիշդ մէջտեղը, այն ատեն խաւարումը բոլորական կ'ըլլայ, իւր զարմանալի չէ որ մարդիկ առաջուրնէ կրնան ըսել թէ ճիշդ երբ տեղի պիտի ունենայ խաւարումը և ուր կէ պիտի կրնայ տեսնուիլ, և արեւին մակերեսին որչափը լուսնէն պիտի ծածկուի: Աստեղագէտը եթէ բաւական ժամանակ տայ, հաշուելով կրնայ ըսել բոլոր խաւարումները որ պիտի պատահին յաջորդ հարեւր տարիներուն մէջ, թէ երբ պիտի սկսին անոնք, որչափ պիտի տևեն, և մարդիկ որ երկիրները երթալու են եթէ կ'ուզեն տեսնել զանոնք:

ՀԱՆՆԵՆՈՒԿ ԽԱՂ ՄԸ (Քէյթ Է. Ուոլտը)

Մայրս անգամ մը գուարճացուց մեզ հետեւեալ հանելուկով: Շատ հաճելի գաղտնիք մըն էր այն, զոր եթէ մայրս յայտնած ըլլար, հանելուկը պիտի կորսնցնէր իր հրապոյրը: «Թիւ մը խորհէ», ըսաւ: Թերևս «Չորս» պիտի խորհէի: «Կրկնապատկէ» խորհեցայ բայց չըսի «Ութ»: Թերևս պիտի ըսէր, «Վեց գումարէ վրան»: «Տասնընչորս»: «Չանիկա երկուքով բաժնէ»: «Եօթը»: «Առաջին անգամ խորհած թիւդ հանէ, և մնացորդը կ'ըլլայ երեք»: Այո, եօթնէն չորս հանուելով կը մնայ երեք, բայց շատ զարմացայ թէ մայրս ինչպէս գիտցաւ, վասն զի ամբողջ գործողութիւնը ես լուրի ըրի մտքովս: Գրեթէ միշտ կ'ըսէի, «Նորէն փորձենք, մայրիկ»: Գիցուք թէ ընտրեցի «Հազար»: «Հիմա կրկնապատկէ ատիկա», պիտի ըսէր առաջուան պէս: «Երկու հազար» պիտի ըսէի իսկոյն: Եւ «Վրան գումարէ տասը», պիտի ըլլար յաջորդ

հրամանը: «Երկու հազար տասը»: Ասիկա դժուար չէր: «Բաժնէ երկուքով»: «Հազար հինգ», պիտի գուշէի, ուրախ ըլլալով թէ դիւրին թիւ մը ընտրած էի: «Հանէ առաջին անգամ խորհած թիւդ, և մնացորդը պիտի ըլլայ հինգ»: Մէկը կրնար խորհիլ տասը, ուրիշ մը եօթը և ես վեց: Արդիւնքը նոյն պիտի ըլլար: Անգամ մը հարցուցի անոր թէ ինչ էր խորհած թիւս, և զարմացայ որ չէր գիտեր: Բայց երբ աւելի մեծցայ, հասկըցայ թէ մնացորդը միշտ աւելցուած թիւին կէսը կ'ըլլայ:

ԱՂՕԹՔԻ ՄԷՋ ԴԱԳԱՐ ՄԸ «Եթէ մեռնիմ արթննալէս առաջ», ըսաւ Դանիկ իր մեծ մօր ծունկերուն քով ծունկի վրայ եկած, «Եթէ մեռնիմ արթննալէս առաջ, կ'աղաչեմ...»



«Շարունակէ, Դանիկ», ըսաւ մեղմ ձայնը, և մեծ մայրը կ'ակնկալէր թէ տղան պիտի ըսէր յաջորդ տողը ազօթքին զոր կ'ըսեն շատ Անգլիացի և Ամերիկացի տղաք: Յաջորդ տողն է, «Կ'աղաչեմ Տէր, ընդունէ հոգիս»: «Կեցիր քիչ մը», ընդմիջեց փոքրիկ տղան, ոտք ելլելով և աճապարանքով սանդուղէն վար վազեց: Քիչ ետքը նորէն վեր եկաւ, և իր տեղը երթալով սկսաւ իր աղօթքը այն տեղէն ուր ընդմիջած էր զայն: Բայց երբ փոքրիկ, ճերմակ գիշերանոցով տղան ապահով պառկեցաւ անկողնին մէջ, մեծ մայրը քաղցրութեամբ յանդիմանեց զանիկա աղօթքը ընդմիջելուն համար: «Բայց ես խորհեցայ իմ ըսածներուն վրայ, մեծ մայր, ատ էր կենարուս պատճառը: Ես թորգոմի խաղաղիկները տակնուվրայ ըրած էի, տեսնելու համար թէ անիկա ինչպէս պիտի բարկանար առաւօտուն: Բայց եթէ մեռնէի արթննալէս առաջ, չու-

զեցի որ ան սառ վիճակի մէջ տեսնէր
խաղաղութեամբ: անոր համար չուսող
վար իջնայու. և զանոնք շխտելու էի:
Եւ ես ի՞նչ պիտի քնէի եթէ զանոնք
չխտկած մեռնէի: "Շխտակէ բաժնդ
պիտի շխտակէի: ըսաւ մեծ մայրը
մեղմ զողջ ոչուն ձայնով: Մեր ա-
ղօթքներէն շատը պարտապ պիտի
չլլէին, եթէ ծուռ բան մը շխտելու
պէտք չկենար:

ԳՈՒԷՃԱԿԱՆ ՏՂՌԻ ՄԸ ՁԵՌՔՈՎ
ԱԶՍԱՏԱՐ

«Գործի մարդիկ երբեմն կ'ըսեն թէ
գոլէճական դաստիարակութիւնը ու-
ղուտ չունի" ըսաւ մարդ մը: «Անոնք
կ'ըսեն թէ գոլէճական տղաք իրենց
կ'ըսենք որուն մէջ չափազանց կը լինեն
անպիտան բաներ և բաւական կորով
և գործունէութիւն չեն ստանար: Բայց
ես կ'ըսեմ թէ այսօր հոս պիտի
չգտնուէի, եթէ գոլէճական տղու մը
կորովը չըլտը, և այս է ճշմար-
տութիւնը: Գոլէճական տղան, որու
ախարհութիւն կ'ըլլայ, նոր և փոքր
գոլէճի մը երիցազոյն կարգին (սին-
կըր) կը պատկանէր, և իր ծախքը կը
հանէր գոլէճին ուսումներուն աշխատե-
լէն զատ ուրիշ գործ ալ ընելով: Ա-
ռաւստեան թերթերը կը տանէր այս
ինչ տեղերը: Այս պատճառաւ ամէն
առաւօտ ժամը 4ին (Ը. Ե.) կ'ելէր, և
միշտ կը տեսնուէր թէ բաւական
կորով կը ցուցնէր տղան այս բանին
մէջ ալ: Առաւօտ մը, երբ մտերս
պատահած չուրի ողջումը տեղի ու-
նեցաւ արագութեամբ և չերեակոյ-
ուած ուժգնութիւնով, տղան սովու-
թութեանը պէտեղաւ թերթերը տանե-
լու: Միայն այդ մասնաւոր օրը ձի հե-
ծաւ այդ նպատակին համար, մաքուր
գեղին մումազօծ (մումազօծ) տարակմը
իր կունակն առած: Տակալին մութ էր
երբ գուրս ելաւ, վասն զի գեռ ժամը
չորս չկար, և անձրեւ հեղեղներով
կ'իջնէր: Քաղաքին աւելի ցած կող-
մերը արդէն սղողուած էին, և չուրը
պաղ պաղ իր ձիուն ծունկերուն կը
գալէր սակալի մթութեան մէջ: Երբ
տունէ տուն կ'երթար, գտաւ որ ա-
հարեկեալ տնեցիները իրենց տնական
բաները և կերակուրները տան երկ-
ւորք յարկերը կը հանէին: Երբ մարդ
մը գրեթէ նուազեցաւ, երբ պատմեց
թէ իր որդին երկու մըն հեռու կը
բնակէր աւելի ցած կողմը, թէ ան ձի
չունէր, կ'ինն ալ հիւանդ էր: Լրաւ
գիր ցրուող տղուն միտքը արագ խոր-
հուրդ մը կնկաւ: Մտածեց թէ այդ

առաւուսն իր գործը ոչ թէ թերթ
ցրուելը ըլլար էր, այլ օգնել անօգ-
նակաւներու: Բակեց տոպրակը, վար
գրաւ և ըսաւ: «Ես պիտի երթամ,
ձեր որդին կ'ըսէ ձի հեռնալ:» Տղան
իր ձիով գնաց այդ երկու մըն համ-
բան, թէպէտ օրը ցուրտ, մութ և
խոնաւ էր: Չին մասաւր լողաց ճամ-
բան, Գտաւ տունը, ձին տուաւ մար-
դուն, որ իր կինը ըստ կարի լաւ մը
փաթթեցէ ետքը իրեն հետ ձիուն փայ
առաւ: Երեքն ալ իրենց վտանգաւոր
ճամբորդութիւնն ըրին ետ դէպ ի ա-
ւելի բարձր գետինը. տղան բաւական
տեղ լողաց, ժամանակ ժամանակ զար-
նուելով շուրին վրայ տատանող ու-
տերու, փայտերու և կարասիներու
կտորներու: «Տղան ճիշդ ժամանակին
եկաւ,» ըսաւ վերոյիշեալ մարդը երբ
լնցուց իր պատմութիւնը: «Մեր տունը
փլաւ և հոսանքէն տարուեցաւ բոլոր
իր մէջ գտնուածներով: Մեծք երբեք
պիտի չազատուէինք այդ հեղեղէն և
թէ այդ գոլէճական տղուն կորովը
չըլտը»

ԽՄԱՍԱՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Բարի քարոզիչ մը մինչ սեղան նըս-
տած էր իր ընտանիքին հետ, անոր
տաանըմէկ տարեկան տղան սա հար-
ցումը ըրաւ: «Հայր, կը խորհիմ ինձի
համար ընտրութիւն մը ընել, արդեօք
ի՞նչ ընտրէի» «Քեզի աւելի աղէկ է
մէկէ աւելի բաներ ընտրել, դեռ ոչ
թէ երեք բաներ ընտրես: Նոյն որ
լաւ ընտրութիւն ընես:» Տղան լաւ
մտածեց և ընտրեց նախ բարի նկա-
րագիր, երկրորդ, լաւ առողջութիւն,
և երրորդ լաւ կրթութիւն: Հայրը ը-
սաւ թէ համբուր, իշխանութիւնը,
հարստութիւնը և զանազան ուրիշ բա-
նէր ալ ցանկալի են ամէն մար-
դու: «Ես ասոնց բոլորին վրայ ալ
խորհած եմ,» ըսաւ տղան, «բայց
եթէ ունենամ բարի խիղճ, լաւ ա-
ռողջութիւն և աղէկ կրթութիւն,
պիտի շահիմ բոլոր ստակը որ ինձի
օգտակար պիտի ըլլայ, ամէն բան իր
յարմար տեղը պիտի գրաւէ:» Արդա-
րև իմաստուն ընտրութիւն մը, կար-
ձեմ, այդ տարիքը ունեցող պատա-
նի մը համար:

ՀՈՂ ՏԱՐ

1. Հող տար ստանալիս: Առողջ
միտքը մեծ մասամբ կախում ունի
առողջ մարմնէ. և առանց քաջա-
ռողջութեան հաւանական չէ որ ու-
նենաս կորով կամ զուարթութիւն
կամ արիւթիւն պարտականութիւնք

կատարելու և կամ յաջողութիւն կեան-
քի մէջ: Ուրիմն ըրէ ամէն բան լաւ
առողջութիւն ունենալու և զպնիկա
պահելու համար:

2. Հող տար ճանաչելու: Ես մա-
նակը Ատաուճոյ քեզի շնորհած բան
բոքներուն ամէնէն արատաւականներէն
մէկն է: Եթէ զանիկա գէշ գործաւ
ծես, կորուստ, վնաս և կործանում
կը կրես. եթէ աղէկ գործածես, կը
վայելես յաջողութիւն, ընտրելու նկա-
րագիր և ազդեցութիւն, մտաւորա-
կան կեանք, հոգեկան կեանք: Արեւմտ
ճանցիր և միշտ միտք պահէ ժամա-
նակին յարգը: Բունէ և օգտակար
ըրէ ամէն մէկ վայրկեանը որ կ'անց-
նի: Հեռու թող ըլլաւ ծուլութիւնը,
չուսողութիւնը և յպառույթը: Երբեք
այսպէս չար մի թողոր ինչ օգտակար
գործ որ կարելի է ընել հիմա: Կոչ
ստած սեպէ այն օրը որուն մէջ յա-
ռաջգրութիւն կամ բարիք մը ըլլեր:

3. Հող տար ընտրելու: Գուն
ոչ միայն պիտի ճանչցուիս քու ըն-
կերներէդ, այլ չուսող պիտի ըլլաս
անոնց նման: «Իմաստուններու հետ
քարոզք իմաստուն կ'ըլլայ: Բայց ան
միտներու հետ ընկերացողը չար կ'ը-
լլայ:» Արեւմտ ոչ միայն փախելու եւ
ժողերու, սրկաներու, բարոյապէս ան-
կեաններու, մոխրերու, կիրակին աւ-
րոզներու, հայհոյներու, սրբազան
բաները ծաղրողներու ընկերութիւնն,
այլ փնտաւելու եւ իմաստուններուն և
բարիներուն ընկերացութիւնը:

ՄՈՒԿԻ ՄԸ ԽՆԿԸ

Ասկէ քիչ ժամանակ առաջ Նիւ Եորք
քաղաքին մէջ հեռագրական ձողեր
տնկելու համար փոսեր պեղելու ատեն
գործարարները մուկ մը տեսան որ փո-
սերէն մէկուն մէջ ինկած էր: Փոքրիկ
կենդանին ժամերով վազվզեց քաղճաւ
կատաղաբար փոսին բոլորախոր: Յե-
տոյ թուեցաւ թէ հանդարտեցաւ և
սկաւ խելքը գործածել: Հոտ սկսաւ
կաննաւոր կերպով պատուական և խո-
ռոչ մը բանալ փոսին պատին բոլոր-
ախոր: Փոսը քանի մը ուր խորութիւն
ունէր, Գիշեր ցերեկ փոքրիկ արարա-
ծը աշխատեցաւ ժրութեամբ, և տեղ
տեղ խոռոչներ կը բանար, որպէս զի
անոնց մէջ հանգչէր իր դժուար աշ-
խատութիւնն, քանի՞ զինք յոգնեցնող
այն սանդուղը յատակէն վեր բարձրա-
նոր: Գործարարները անոր ուտելիք
կաւ տային և երեք օր ետքը անխոնջ
կենդանին հասաւ փոսին գագաթը:
և ծափահարութիւններով ողջուեաւե-
ցաւ երբ փոսէն դուրս ելաւ և գնաց:

Յարեկան բաժանորդակն 6 դան. արծնի 6
կանիկ, ամեն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտիստարայ Ընկերութեան կողմէն
Արտօծուածքն Զ. Ք. ԿԻՆԻ
Տնօրէն—Մարագիր Հ. Ս. ՊԱՐԵԼԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՌԱՔ ԳՅՈՒՅՆԱՆ
Գրեականքը Եօզուշու, Ամերիկայի Խաչ